

իշխանութեան մը մէջ ըլլան՝ թէ՛ որպէս օրէնսդիր մարմին եւ թէ՛ որպէս քաղաքացի:

Կանտի համար, նպատակներու իշխանութիւնը բարոյական իտեալներու այն ընդհանուր ընկերութիւնն է, ուր բոլոր բանական էակները կ'ենթարկուին այն օրէնքին, որու շրջագծի մէջ մարդը ինքնիր հետ եւ իր մերձաւորներուն հետ, երբեք լո՛կ որպէս *միջոց*, այլ որպէս *նպատակ* վարուելու է:

Իսկ մարդու *կամքի ինքնավարութիւնը* այս պարագային կը նշանակէ, որ մարդ իր ազատ կամքով կը դառնայ լիիրաւ անդամ բարոյական ընկերութեան մը մէջ, ուր ան օրէնսդիր ըլլալու հանգամանքը կ'օգտագործէ՝ որպէս չափանիշ իր անձնական կանոններու (մաքսիմ) ընտրութեան համար: Այլ խօսքով, երբ վարմունքի անձնական կանոնները (մաքսիմ) կ'ընտրուին բարոյական իտեալ ընկերութեան միաժամանակ օրէնսդիր անդամի մը կողմէ, այն ատեն այդ վարմունքը կը վայելէ բարոյական ճիշդ վարմունք ըլլալու յատկանիշը:

Վերոյիշեալ հինգ բանաձեւերէն ետք, այժմ կը ներկայացնեմ Կանտի չորս պատկերաւոր **օրինակները**, որոնք յիշուած են Կանտի երկրորդ, *քնութեան օրէնքի բանաձեւէն* ետք, զայն աւելի յստակացնելու համար: Այս օրինակները ունին տրամաբանական կառոյց, բաժնուած են՝ կատարեալ եւ անկատար պարտաւորութիւններու եւ իւրաքանչիւրի մասին կան երկուքական օրինակ, նախ «մենք՝ մեր հանդէպ» ապա «մենք՝ ուրիշներու հանդէպ»:

Պարտաւորութիւն	Օրինակներ, մենք՝ մեր հանդէպ	Օրինակներ, մենք՝ ուրիշներու հանդէպ
Կատարեալ պարտաւորութիւն	անձնասպանութեան օրինակը	խոստումի օրինակը
Անկատար պարտաւորութիւն	տաղանդի օրինակը	օգնութեան օրինակը

Կանտի համաձայն, *կատարեալ պարտաւորութեան* պարագային, անձնական կանոնի (մաքսիմ) առանց հակասութեան ընդհանրականացում մը մտածելի չէ (այսինքն՝ կարելի չէ պատկերացնել) եւ կամեցողութեան հակառակ է: Իսկ *անկատար պարտաւորութեան* պարագային, անձնական կանոնին (մաքսիմին) առանց հակասութեան ընդհանրականացում մը, թէւ մտածելի է (այսինքն՝ կարելի է պատկերացնել), սակայն կը մնայ կամեցողութեան հակառակ:

Ստորեւ տրուած չորս օրինակներով, աւելի պիտի յստականայ վերոյիշեալ գաղափարը:

1. Անձնասպանութեան օրինակը

Անձ մը, որ ծանր ու աղիտալի կեանք ունեցած է ու բազմաթիւ դժուար